— Ու՞մ հետ: Հայրս տանը չէ: Մըհէն կորաւ: Եղբայրս այսպիսի բաների գլուխ չունի: Ո՞վ կտանէ ինձ:

— Ես:

— Դու հանաք ես անում, Ֆարհատ:

Ես հաւատացրի Մարօին, որ իմ խոստմունքը կատակ չէր, թէ ես բոլորովին մոռացել էի, որ այս շաբաթ աստուածածնի տօնն է, հիմա որ իմացայ, ես ինքս մեծ ցանկութիւն ունեմ այնտեղ գնալու, որովհետեւ գիտեմ, ուխտաւորների թւում կը լինեն մեր քաղաքացիներից շատերը, գուցէ նրանց մէջ կը գտնեմ իմ բարեկամներին, որոնցից այնքան ժամանակ բաժանուած էի:

— Կարելի է տեսնես մօրդ եւ քոյրերիդ:

— Շատ կարելի է:

— Լաւ: Հիմա ինչ եմ ուզում անել, Ֆարհատ, — շարունակեց Մարօն ծանր կերպով: — Առանց եղբօրս կամքին ես չեմ կարայ գնալ, դու պէտք է խնդրես Հասօից, որ ինձ թող տայ քեզ հետ գալու: Դու ասա նրան, թէ ինքդ ուզում ես ուխտ գնալ, ինձ էլ տանում ես քեզ հետ: Յասոն քո խաթրը շատ ունի, քո խօսքը չի կոտրի: — Այսպէս կ'ասես, հա՞:

— Հա՛, այդպէս: Ես այս րոպէիս կ'երթամ Հասօի մօտ, քեզ համար հրաման կ'առնեմ:

Մարօն փաթաթոեցաւ ինձ որպէս երեխայ, որին խոստանում են բազարից քիշմիշ բերելու: Նա թողեց ինձ եւ դուրս վազեց, ասելով.

— Սպասի՛ր, մի քիլ կաթ բերեմ խմի՛ր, քաղցած մի՛ գնա:

Նա շուտով բերեց մի մեծ թասով կաթ եւ մի կտոր հաց: Նախաճաշիկս անելեն յետոյ, ես դիմեցի դէպի Հասօի արտը:

Հասօն սկզբում շատ դժուարացաւ մեր ուխտ գնալու մասին, ասելով, թէ տունը բոլորովին կը մնայ անտէր, թէ տունը առանց տղամարդի հսկողութեան թողնել չի կարելի, որովհետեւ ամէն գիշեր գողութիւններ են պատահում. թէ նա, Հասօն, պէտք է ստիպուած լինի թողնել դաշտը եւ գնալ տանը պառկելու. այն ժամանակ նրա ցանքերը կը մնան առանց հսկողութեան: Նա աւելացրուց, թէ անիծած քրդերն իստակ բարբարոսներ են, որքան կարողանում են վեր առնել՝ գողանում են, իսկ մնացածը փչացնում են եւ այնպէս հեռանում: Եւ նա այս պատճառով ամբողջ գիշերը չէ քնում, հէնց հրացանը գոգին դրած, նստում է եւ բաց աչքերով հսկում է. աչքդ խփեցիր, բոլորը կը տանեն: Եւ վերջացրուց, թէ իր հայրը-ծերունի որսորդը — կամ Մըհէն եթէ հե-